ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1880

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒՆՈՒԱՐԻ

№ 7 ՔՍԱՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 7

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԷՆ 10
ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1
ԿՈՊԷԿ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ
ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ.
ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.
ՕՏԱՐԱՔԱՂԱՔ. ԴԻՄՈՒՄ ԵՆ ՌԵԴԱԿ.
ВЪ РЕД. ГАЗЕТЫ „ПЧЕЛА АРМЕНІИ“
Г. Тифлисъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ հասարակութեան մէջ տիրած մի քանի չռայլութեանց առթիւ։

Ազգային. — Թղթակցութիւնք Կ. Պօլսից և Ծալկայից.—Սիմֆերապոլի Աղքատաց ընկերութեան 1879 թուի հաշիւը.—Թայմզի յօդուածը։—Պատրիարքին ներկայանալը։

Մանր լուրեր։

Յայտարարութիւններ։

Ֆելիէտօն։

ԹԻՖԼԻԶ 30 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1880 Թ.

Մենք „Մեղուի“ № 3-ում հաղորդել էինք, որ Շուշում տօներին լինելու այցելութեան փոխանակ նուիրատուութիւնք եղել են և հաւաքվել էր 111 ռուբլի, որ պ. Կաֆիեվը բաժանել էր աղքատներին։ Բայց մեր ժողովրդեան մէջ որքան անօգուտ սովորութիւններ կան, որոնք կլանում են ահագին գումարներ, մինչդեռ մեր հասարակութիւնք դեռ ևս շատ անհրաժեշտ կարօտութիւնք ունեն, որոնք մնում են անկատար, հէնց դրամական միջոցների պակասութեանց պատճառով։ Մեր դպրոցներն կարօտ վիճակի մէջ են, թերի և թուով էլ համեմատաբար շատ նուազ են։

Մեր եկեղեցիք մեծ մասամբ աղքատ են և անշուք. փոքր ի շատէ մաքուր պահպանվող և գեղեցիկ եկեղեցիք բացառութիւն են կազմում. եկեղեցական դասն ըստ մեծի մասին անապահով վիճակի մէջ է գտնվում։ Մեր հասարակութիւնք աղքատանոցներ չունեն, որբանոցներ չունեն, անկելանոցներ չունեն, ցորենի ամբարներ չունեն հարկաւոր ժամանակ ժողովրդեան օգնութիւն հասցնելու համար։ Շատ հասարակութիւնք մինչև անգամ բժիշկ չունեն որ և է հիւանդութեան առաջն առնելու համար, առհասարակ գրեթէ ոչ մի միջոց ժողովրդեան առողջապահութեան վերայ հոգալու համար։ Այս ամենը չկայ, որովհետև միջոց էլ չկայ այդ պիտոյքները լցուցանելու համար։ Այսպիսի վիճակի մէջ մեր հասարակութիւնք այնուամենայնիւ մեծամեծ աննպատակ և անօգուտ ծախքեր ունեն, որոնք եթէ խնայվէին և գոյացած գումարը գործ դնվէր հասարակութեանց անհրաժեշտ պիտոյքների վերայ—մենք հոգացած կ'լինէինք մեր վերոյիշեալ պիտոյքների շատերն։ Մի երաշտ կամ անբերրի տարի ժողովրդեան անելանելի վիճակի մէջ է գցում, մի հիւանդութիւն ժողովրդեան յուսահատութեան է հասցնում, տանելով նրանից անթիւ զոհեր, որոնց մեծ մասը կարելի էր խլել մահուան ձեռքից, եթէ ի գործ դնվէին կարևոր միջոցները։

Այն սովորութիւններն, որոնք ի զուր տեղ մեծամեծ ծախքեր են պահանջում ժողովրդից են՝ թաղման հանդէսներն, իրանց սևերով, անուանակոչութեան օրը տօնելը, հարսանեաց շռայլ հանդէսները և այլ սովորութիւնք, որոնք յատուկ են իւրաքանչիւր քաղաքի կամ նահանգի։

Եթէ լոկ Թիֆլիզ քաղաքն առնելու լինենք— այստեղ իւրաքանչիւր տարի զէթ հարիւր հանգուցեալ կ'պատահի, որոց թաղման հանդէսն մի քանի հարիւրից մինչև մի քանի հազարի է հասնում։ Երևակայեցէք, որքան աւելորդ գումար գործ է դնվում սևեր կարելու համար, մինչդեռ հայ եկեղեցին երբէք չէ ընդունել այդ սովորութիւնը, ճաշի համար, որ վայելում են սովորաբար հարուստ բարեկամներն ու ազգականները, մինչդեռ քաղաքիս մէջ աղքատանոց չկայ, բաւականաչափ, երաժշտի և այլ աւելորդ բաների վերայ։ Ահագին գումար կ'կազմվէր միայն այս աւելորդ ծախքերից ձեռք վեր առնելով, եթէ մեռելատէրը միայն կէսն այն գումարի նուիրէր յօգուտ հասարակական հաստատութեանց. այսպէս թէ ինքը վաստակ կ'ունենար և թէ հասարակութիւնը։

Հայի անունը զուր տեղը տնտես և խնայող է հրատարակվել։ Ընդհակառակը հայից շռայլ և անհաշիւ մարդ դժուար է գտնել։ Նա ժլատ է երևում, որովհետև ներկայ ժամանակիս պահանջների համար քիչ է տալիս, չունենալով միջոց, ըստ որում արդէն աւելորդ սովորութիւնները խլում են նորա միջոցների նշանաւոր մասը։ Մենք չենք յիշում և այն գումարներն, որ սովորութիւն դարձած շռայլութիւնն էլ այսօր կլանում է հայի գրպանից։ Ժամանակ է այս հանգամանքների վերայ մտածել և հոգալ։

ԱԶԳԱՅԻՆ

Կ. ՊՕԼԻՍ

յունուարի 12/24 1880

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» լրագրի)

Հօճա Ահմէտ Թէֆվիքի խնդիրն հուսկ

ՖԵԼԻԵՏՕՆ

Ղորդ է ասում առածը, թէ թուրքը թակէ Վարդանին, հայը թակէ Վարդանին—պէտք է աւելացնեմ ամենքն կը թակեն ֆելիէտօնիստին։ Այս դրութեան մէջ եմ և ես, ընթերցող, քեզնից խորհուրդ պիտի հարցնեմ, թէ ինչ անեմ, արդեօք թողնեմ իմ պաշտօնս, թէ էլի շարունակեմ քոթակ ուտելս։

Ժամանակը շատ փոխվել է, ծանրացել է խեղճերի համար. ֆելիէտօնիստն էլ մէկն է սրանցից։

Տես, ընթերցող, նա մի արտօնութիւն էր վայելում մինչև հիմա, շատ չափազանցութեան հասած բաները ծաղրել և անցնել։ Նորա իրաւունքն ու արտօնութիւնն էլ այդ էր, բայց այսօր նրան այդ իրաւունքից և արտօնութիւնից էլ զրկում են, հէնց կամենում է ծիծաղել մի անբնական, չափազանց երևոյթի վերայ իսկոյն գլխին խփում են, թէ և բոլորովին այլ հարց է թէ ով է զգում աւելի ցաւ, խփողը թէ ֆելիէտօնիստը։

Նայիր և տես, ընթերցող, աշխարհիս վիճակը։ Մէկը հանդէս է գալիս իբրև երևելի գիտնական ճանապարհորդ, հաւաքում է գլխին խուռն բազմութիւն, ժամերով խօսում է և ոչինչ ասում չէ, ժողովուրդն էլ սիրով ծափահարում է, ճանապարհորդը իրան բաւականութիւնը ստանում է գիտնական—հետազօտող անունը վայելում է—անուշ լինի իրան։ Միւսը ամբիոն բարձրանում է, խօսում է ճարտիկութեամբ, աւելի լաւ է ասել կրկնում է սերտածը ճշդութեամբ, քննում է հնութիւնք (առանց հնագէտ լինելու), հայոց լեզուի ծագումն է հետազօտում (առանց լաւ հայերէն գիտենալու) քրքրում է գաւառական բարբառների խնդիրը (առանց գաւառական բարբառների տեղեակ լինելու), համեմատական լեզուագիտութեան յառաջադիմութիւնն է պատմում (առանց լեզուների գիտութեան), բևեռագիրներ կուզես, թէ հիերոգլիֆներ—բոլորն էլ տակն ու վրայ է անում, զէնդի ու փիւնիկեցւոց այբբէնների ազդեցութիւնն է մեսրոպեան տառերի ձևագրութեան վերայ փիլիսոփայական հայեցուածք գցում, մինչև անգամ հայոց ծաղկագրերին, ճնճղկագրերին և տաղանագրերին էլ հանգիստ չէ թողնում—ժողովուրդը ծափահարում է, հիանում է նորա գիտնականութեան վերայ (որովհետև ինքը ոչինչ չգիտէ)—գիտնականն իսկ գիտնականն իրան կարծում, իր դրութեամբ գոհ մնում—Աստուած վայելումն տայ իր տիրողին, բայց իրաւունք չտայ նրան արգիլել ուրիշ խօսողին։ Երրորդը տեսնում ես, արժան անարժան խմբագրի անունն կրում, ամեն ցնդաբանութիւն գրում ու տպում—տգէտ ամբոխին շողոքորթում—սա էլ նրան մեծարանում, փառաբանում, նոր լուսաւորիչ համարում—երկուսն էլ գոհ են, երկուսն էլ ինչպէս ասում են իրար գտել են—կճուճը գլորվեցաւ իր խուփը գտաւ։

Այսպիսի կեղծ և անբնական երևոյթների մասին ֆելիէտօնիստն ինչ ունի անելու, բացի ծիծաղելու եղածների վերայ և անցնելու։ Այս այսպէս էր լինում վաղ, և նրան էլ այդ իրաւունքից ոչ ոք չէր զրկում, ինչպէս որ վերոյիշեալները կեղծ գիտնական, տգէտ խմբագիր և այլն դառնում էին անիրաւացի կերպով—ֆելիէտօնիստն էլ ծաղրում ու անցնում էր ամենայն իրաւամբ. ամենքը լռում էին նոյնպէս իրաւամբ։ Բայց այժմ, այժմ այնպէս չէ, խեղճ ֆելիէտօնիստի հոգին հանում են, ուզում են նրան և՛ միակ փոքրիկ բաւականութիւնից էլ զրկել, մինչդեռ իրանք աշխարհիս ամեն փառքն ու պատիւը վայելել, օգուտ քաղելով բազմութեան տգիտութիւնից։

Այսպիսի դրութեան մէջ ես ինչպէս մնամ իմ պաշտօնումս—ահա դորա համար եմ ընթերցողիս խորհրդին կարօտում, օգնութիւն խնդրում. հասկանալի է, որ մարդս միշտ միայն նեղութեան ժամանակ օգնութիւն է ուրիշից ուզում, ինչպէս «Մշակի» խմբագիրն է միշտ անում, իսկ երբ այդ նեղութիւնը չկայ, նա հպարտանում է, իրան անսխալական մի հրէշ է կարծում։ Օրինակներ բերեմ, որ ասածս, թէև պարզ է, աւելի պարզ լինի։

Սրանից առաջ ֆելիէտօնիստ Նոր-Փիլիսոփան հինգ խօսք նուիրեց իր ֆելիէտօնում մեծ. պ. Սեդրակ Մանդինեանցին—այն ես անմեղ խօսքեր, ոչ ծաղր կար մէջը և ոչ էլ կատակ—նա պ. Մանդինեանցը հինգ հարիւրներով խօսքեր տեղաց—ոչ թէ ֆելիէտօնիստի, այլ նոյն իսկ խմբագրի գլխին—կրակ թափեց նորա գլխին—այրեց, թէ այրվեցաւ խօսքս դորա վերայ չէ, այդ ընթերցողաց կ'վերաբերի դատել, միայն որ խեղճ ֆելիէտօնիստի իրաւունքը բռնաբարեցաւ, ու քիչ մնաց, որ և խմբագիրը մէջ տեղում չճխլվեցաւ։ Միւս անգամ Քաղքցին հանդէս եկաւ պ. Երիցեանցի դասախօսութեան մասին երկու բան խօսեցաւ և ահա սա էլ բարկացած, զայրացած իր արամազդական բարձրութիւնից չանթեր նորա վերայ արձակել սկսաւ և արգիլեց, որ այսուհետև չհամարձակի նորա անունը տալ, ինչպէս և ինքը չէ բարեհաճելու նորա անունն անգամ յիշել և գիտենալ, այսինքն իմ՝ աննշան արարածիս, որ յանդգնում է նորա գիտնականութեան վերայ կասկածել, նրան երևելի արևելագէտների շարքից իջեցնել և նոցա պատուանդանի մօտ կանգնեցնել։

Բայց պ. Երիցեանցը սորա համար հօ չէ նեղացել—ոչ, այլ որ ես իբրև թէ կասկածել եմ նորա ասածների, աւելի լաւ է ասեմ սերտածների, ճշտութեան մասին ասելով, զորդ է թէ սուտ ասածները, մեղքն ու վարձքը իր շնքին—հապա ինչու չէ կարդացել և այն, որ ասում եմ թէ ես չեմ կարծում, որ «նա իր դասը լաւ սերտած չլինէր և իւր պատրաստութիւնքը լաւ տեսած չ'լինէր»։ Ուրեմն այդ չէ նորա բարկութեան պատճառն, այլ այն որ ես նրան արևելագէտների պատուանդանի մօտ կանգնացրել եմ և ասել, որ փոխանակ իւր «եսերի աւելի յիշէր իսկ արևելագէտների կարծիքներն և իրան պատիւ համարէր նոցա կարծիքներն ուսումնասիրելն և նոցա աշակերտել ճգնելը զարմանալով նոցա աշխատանքի վերայ և ոչ աշխատել ունկնդիրներին զարմացնելու իւր արժանաւորութիւններով, իբրև օտարների փետուրներով զարդարած «ճայ» թռչունը, որից երբ ամեն թռչուն իւր փետուրը խլեց, նա տկլոր մնաց։ Միթէ համեստութիւնն ու չիմացածն ուսանելը մեղք է և փոքրութիւն, և չուսած ուսուցիչ դառնալն տգէտների աչքում, առաքինութիւն և մեծութիւն։ Պ. Երիցեանցն ինձ տգէտ է համարում և ինձ մատնացոյց է լինում Древняя исторія Востока, Зайцева; Manuele d'histiore ancienne de l'Orient par Lenormant, Paris. 1869, կամ Histoire ancienne des peuples de l'Orient; par Masperos, Paris, և այլն և այլն գրքերի վերայ, որ ես կարդամ և եթէ այդ քիչ կ'լինի—նա և «Մեղուի» խմբագրի պոչից էլ է բռնում—սորա մօտ էլ է ինձ խրկում, իբրև պատմութեան ուսուցչի մօտ։ Թէ և ամօթ չէ ինձ իբրև Քաղքցու տեղեակ չլինել այդպիսի գիտնական հարցերին, որոնց վերայ պ. Երիցեանցը դասախօսեց, բայց մեղքս ինչ ծածկեմ, այդ յիշած գրքերն ինձ անծանօթ չեն, որովհետև քիչ ու միչ նոցա լեզուն հասկանում եմ, բայց թէ ինքը պ. Երիցեանցն դոցա բնագիրները կարդացել է արդեօք թէ ոչ—ահա այդտեղ ես յիրաւի մի փոքր կասկածում եմ։ Ես պատիւ ունիմ յայտնելու մեր զայրացած գիտնականին որ գերմաներէն աւելի շատ կան նորա դասախօսած հարցերի վերաբերութեամբ գրուածներ, ինչպիսի են Պետերման, Բոպպ, Բէօտտիխէր—Դէլագարդ, Ֆր. Միւլէր, Հիւբշման և այլք։

Եթէ այդ գրուածքների հետ ծանօթ է պ. Երիցեանցն, ես այժմէն իսկ ներողութիւն եմ խնդրում նրանից, որովհետև մեղքը շնքին, այդ մասին ես կասկած եմ կրում, իսկ ինչ կ'վերաբերի ինձ պ. Սիմէօնեանցի մօտ խրկելուն, շնորհակալ եմ—ես նորա ուսուցիչների դասախօսութիւնքն էլ եմ լսել, միայն եթէ ինքը կ'կամենայ այդ անել կարող է գնալ Ներսիսեան դպրոցի երկրորդ դասատուն, և կ'լսի այնտեղ և՛ Բաբելոնի և Ասորեստանեայց և՛ Եգիպտոսի և թէ այլ հին ազգերի յիշատակարանների մասին, ինչպէս և եգիպտացւոց հիերոգլիֆների մասին և այլն և այլն. միայն այն ձևով, թէ եղել են այնպիսի անձնազոհ մարդիկ, որոնք իրանց կեանքը մաշել են այդ հնութիւնքը քրքրելու և բացատրելու համար, որոնց բոլոր մարդկութիւնն պէտք է երախտապարտ լինի։ Այստեղ անշուշտ պ. Սիմէօնեանցը մոռանում է այդ անձանց շարքում յիշելու պ. Երիցեանցի անունը։ Պ. Երիցեանցը ցոյց տուեց և մի քանի հայ նշանագիրներ—

ուրեմն երկոցունց կողմանց հաճութեամբ վերջացաւ: Անմէտ Թէֆվիք քանի մը ամսոյ համար Քիոս կղզին աքսորվել որոշուեցաւ և այս ժամանակամիջոցին տէրութեան կողմանէ թոշակ պիտի տրուի իւր ընտանեաց: Անգլիական դեսպանը իրեն տրուած գոհացուցիչ խոստմանը վրայ յարաբերութիւնները դարձեալ սկսաւ և գնաց վերստին ի Բ. Դուռն իւր առաջին այցելութիւնը ընել առ Սայիտ փաշա՝ առաջին նախարար և առ Սավաշ փաշա՝ արտաքին գործոց պաշտօնեայ: Անգլիաբնակ աւետարանական ուխտին անդամք Լօնդոնի մէջ շնորհակալութեան ուղերձ մը ստորագրեր են առ լորտ Սալիզպըրի, Հօճա Անմէտի խնդրոյն մէջ Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ Անգլիոյ կառավարութեան մատուցած հզօր աջակցութեան համար: Հօճա Անմէտի դատական խնդիրը դեռ այն ինչ վերջացած էր և ահա երկրորդ կարևորագոյն խնդիր մը հայոց համար տէրութեան առեանը կը ելլար, այս խնդիրը «Թէրճէմանը-Էֆքեար» հայատառ թրքախօս լրագրի «Վաքըթ» թուրք լրագրին դէմ բացած դատն է: Ահա համառօտ պատմութիւնը. կայսերական քօմիսէրք երբ Կարինէն ի Վան կը մեկնէին, Մուշ հասնելու օրերը չորս հայ ձերբակալուելով ի քրդաց չարաչար կը գանակոծուին և մէկ երկուքը կը մեռնին, կարծես թէ կայսերական քօմիսէրաց գալուստը փոխանակ այդ վայրագ հրոսակները ահաբեկ ընելու աւելի կը քաջալերէր, զի անտեսանելի մաս մը կը գրգռէր զնոսա յաւեր և յապականութիւն: «Թէրճէմանի» Մշոյ թղթակիցը 2 ամիս յառաջ այս դէպքը յիշատակած էր և խմբագրութիւնն ալ առաջնորդող յօդուածով մը Բ. Դրան խորին ուշադրութիւնը հրաւիրած էր, ուշադրութիւն մը զոր «Մասիս» քանիցս հայկական համբերութեամբ հրաւիրած է, մինչդեռ նա երդուեալ է անլսող մընալ երբ խնդիրը Հայաստանի բարեկարգութեան վրայ է: Հարստահարութիւնք չը դադրեցան, «Թէրճէման» ևս չը դադրեցաւ գրելէ և ինչ որ Ներսէս Պատրիարք բերանացի կը թախանձէր, կը պահանջէր և կը պնդէր, նոյնը «Թէրճէման» գրաւոր կը հաստատէր ապացուցանելով թէ նոյն ինքն կայսերական բաղձանաց համաձայն որպէս զի հարստահարութիւնք բարձուին և տեղական բարւոք վարչութիւն մը հաստատել կարելի լինի, պէտք է որ հայաշատ կեդրոններու կառավարիչք հայ լինին ինչպէս են Կարնոյ և Վանայ վիլայէթները: «Թէրճէմանը Էֆքեար» կը շարունակէ գրուցելով Սուլթանին կամքը այն ատեն միայն յարգուած պիտի լինի, երբ արդարութիւնը մի և նոյն կշռով բաժնուի մահմետականին և ոչ—մահմետականին մէջ և այս հնարաւոր է միայն քրիստոնեայ կառավարչի մը ձեռօք. Լիբանանու օրինակը կենդանի վկայ մ'է, փորձեցէք նոյնը Հայաստանի համար և քանի մը տարիէն արդիւնքը կը տեսնէք և այլն: «Վաքըթ» կառավարութեան կէս պաշտօնական թերթը, «Թէրճէմանի» վերոյիշեալ խօսքերը ընդարձակօրէն օրինակելով, գրգռիչ յառաջաբանով մը կը տպէ իւր սիւնակներուն մէջ, նախարարաց խորհրդոյն ուշադրութիւնը հրաւիրելով քանի մը տարիէ ի վեր հայոց բռնած կասկածոտ ընթացքին վերայ առ օսմանեան տէրութիւնն և որոյ արձագանգ կարելի է համարել առհասարակ հայ լրագրաց գանգատները և ի մասնաւորի «Թէրճէմանի» վերջին յօդուածները որք յայտնի համարձակ զհայ ժողովուրդը կառավարութեան դէմ յուզելու նըպատակ ունին. հուսկ ուրեմն «Վաքըթ» կառավարութեան թշնամի կանուանէ «զԹէրճէման», ապստամբ, խռովարար և իբր այն ծանր պատժոյ արժանի: «Թէրճէման» «Վաքըթի» զրպարտութեանց և զրախօսութեանց վրայ սրտմտած բողոք կը բառնայ և դատ կը պահանջէ տէրութենէն: Երեք հայ փաստաբանք «Թէրճէմանի» ներկայացուցիչ կը կարգուին և մէկ ասորի՝ «Վաքըթ» լրագրին: Դատը հրապարակային է, առաջին նըստին հարիւրաւոր բազմութիւն լեցուած է զի նմանօրինակ դատ մը առաջին անգամ է որ տեղի կունենայ օսմանեան տէրութեան մէջ, ամեն ոք վստահ է թէ իրաւունքը կատարելապէս «Թէրճէմանի» կողմ է, բայց թերևս կգտուին մեզ նման թերահաւատք ոմանք որ «Վաքըթի» կառավարութեան ձայն լինելուն դատական ատենին վերջնական վճիռը ի նպաստ անոր տրուելուն հաւանականութիւն ընծայեն: Առաջին նիստը տեղի կունենայ յորում երկու կողմերը իրենց գանգատանաց չարժառիթը կը բացատրեն և ամբաստանութեան պատճէնը նախագահին կը ներկայեն. 4 ժամ ճառախօսութենէ յետոյ նիստը կը վերջանայ և մի քանի օրէն երկրորդ նիստը գումարել կը որոշուի: Առաջին նիստը նախապատրաստութիւն լինելուն, չատեր չէին գընացած սպասելով երկրորդ նիստին որ յառաջիկայ շաբաթու սկիզբը պիտի գումարուէր, օրը մօտեցած էր երբ յանկարծ ի մեծ զարմանս ամենեցուն երէկ լսեցինք թէ տէրութեան ընդհանուր դատախազի պահանջման վրայ թէ քանի որ դատաստանը չէ լմնցած հարկ է որ «Թէրճէմանի» խմբագիրը և արտօնատէրը միանգամայն ձերբակալուին, ոստիկանութեան պաշտօնեայք ուշ ատեն խմբագրատուն կերթան և կը ձերբակալեն Սաքաեան Անտօն և Ճիվէլէկեան Տիգրան էֆէնտիները: Ով որ «Սէտայի Հաքքաթի» և «Մէճմուայի Հաւադիսի» հայատառ թրքախօս վաղեմի 2 թերթերուն հրատարակութեանց ժամանակը յիշէ և այն օրերը այս օրերի հետ բաղդատէ, պիտի խոստովանի արդարև թէ ազգային զգացումը հռովմէական հայոց մէջ ալ բաւական ասպարէզ չահած է: Ո՞վ կրնար կարծել թէ հանգուցեալ հանրածանօթ Վարդան փաշայի հաստատած թերթը օր մը այնպիսի ժառանգներ պիտի ունենար որ հայ խմբագիրներէ աւելի հայ լինէին, անոնց մեղմով զրուցածը իրենք սաստկութեամբ ծանուցանէին, անոնց չնորհք խնդրածը իրենք իբրև իրաւունք պահանջէին և օրինաւոր դատաստանի ենթարկուած ժամանակ յանկարծ ձերբակալուէին ու բանտուէին: Վերոյիշեալ երկու հռոմէադաւան պարոնները, պէտք է խոստովանիլ թէ յանուն ազգութեան այս զրկանաց յանձնառու եղան և նոքա որ Թուրքիոյ մէջ թէ և թէթև յանցանքի մը համար ալ բանտարկուելն չատ անգամ չգիտցուիր թէ վախճանը ինչ կը լինի. Հասարակութիւնը յուզուեցաւ, ամեն ոք անհամբեր գործոյն չարունակութիւնը տեսնել կ'սպասէ և Ներսէս Սրբազան այս անգամ ևս — եթէ ստոյգ է լսածնիս — Հասունի գերապայծառէ աւելի առաջ անցնելով Թաքրիր մը կը գրէ առ Բ. Դուռը Սաքաեանի և Ճիվէլէկեանի ազատութեան համար առարկելով թէ կառավարութիւնը իւր օրինաց համաձայն կամ իւր համոզմամբ չէ, որ բանտարկած է զայնս այլ հակառակ կողման ի գործ ածած ազդեցութեան վրայ որ ապօրինաւոր է. Հարկ է նախ դատաստանը տեսնել և ապա պատիժ տնօրինել. եթէ տեղի կայ, իսկ եթէ ըզգուշութեան համար է ձեռք առնուած միջոցը պէտք է նոյնը ընել «Վաքըթի» խմբագրաց համար.—

Առ այժմ չգիտցուիր այդ Թաքրիրին արդիւնքը, խմբագիրք ի բանտի են, դատաստանի օրն ալ որոշուած չէ, սակայն այնպէս կը կարծուի թէ պատրիարքարանի իրաւասութեան ներքև եղող այս երկու խմբագրաց արձակման համար Հասունի գերապայծառ ևս պիտի աջակցի և ի հարկին Ֆրանսայի դեսպանի օգնութիւնը խնդրելով թերևս քիչ ժամանակի մէջ յաջողին բանտէն արձակել, սակայն այս միջոցը հիմնէ հիմայ կանխանաս է, տակաւին քանի որ չգիտցուիր Բ. Դրան ոչ դիտաւորութիւնը և ոչ ալ ընթացքը:

Արդարութեան նախարար Ճէվտէթ փաշա քանի մի օր առաջ գիր կը գրէ առ պատրիարքարան իմացնելով թէ կալուածոց պաշտօնէութիւնը գրաւ առնլոյն առանց իմանալու կիլիկի լոկ պատրիարքարանի կնիքով պիտի ընդունի, ամեն կալուածագիր որ իրեն պիտի ներկայի. դեռ ամիս մը չկայ որ այս խնդիրը մահմետական և ոչ—մահմետական ազգաց օրագրաց մէջ աղմուկ փոթորիկ մը հանեց և յունաց պատրիարքը հաւանութեան նշան տալով հանդերձ Ներսէս Սրբազան բացարձակ բողոքեց և հրէից ազգապետը և յետոյ հայոց պատրիարքի առաջարկութեամբ ամեն ոչ—մահմետական համայնքութեանց գլուխները միացած և արդարութեան նախարարի առաջարկութիւնը չը կարենալ ընդունելնին յայտարարեցին. կառավարութիւնը քանի մը շաբաթ հաստատուն կեցաւ և այժմ կիմանանք որ հին դրութեան վերադառնալ նախամեծար համարեր է, երանի՛ թէ օսմանեան տէրութիւնը ամեն անգամ իւր պաշտօնէից սխալները փոխելով ուղղել գիտնար, այն ժամանակ անշուշտ նեղութիւնը և դժուարութիւնը կը վերցուէին և մահմետական ու ոչ-մահմետական ազգաց համար սիրոյ ու միութեան ոսկեդար մը կը ծնանէր զոր ժողովուրդք գիտեն գնահատել բայց քաղաքագէտք ոչ միշտ.

[illegible]

ԾԱՂԿԱՅ

(Թղթակցութիւն ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ Լոռից)

Այս օրերս մասնաւոր գործերով պատահեցաւ ինձ լինել Ծաղկայի վիճակում: Այդ 12 հայ գիւղեր իւր մէջ պարունակող վիճակը, շնորհիւ իւր յետ ընկած աշխարհագրական դրութեան մինչ ցայսօր գրեթէ մի անծանօթ տեղ է, որի մասին—մեր լրագրութեան մէջ, եթէ չեմ սխալվում, ո՛չ մի տեղեկութիւն չէ հաղորդուած: Նշանակը լինելով ձմեռային և այս բարձրաւանդակին յատուկ խիստ բքարեր մեզ անկարելի եղաւ այցելել բոլոր վիճակը և հե-

---

առանց նոցա առաջ նշանակութիւնը գնելու, այլ բացատրութիւնը բերանացի ինքն էր ասում այնպէս, որ կարծես, ինքն էր գտել այդ նշանագիրների բացատրութիւնն. այսպիսի տպաւորութիւն գործեց չատերի վերայ, որ և կարծես բաւականութիւն էր պատճառում դասախօսին—բայց դա յիշողութեան մի բան է, կարող էր նա երկնքի նշանը երկիր անուանել և ընդ հակառակն, բայց դոցա մէջ տարածութիւնն այնքան է, որքան իրան պ. Երիցեանցի և մի իսկ արեելագէտի մէջ: Ես որքան յիշում եմ, այդպիսի նշանագրերի ժողովածու նոյն իսկ Գարեգին վարդապետ Սրուանձտեանցի «Թորոս Աղբար» երկասիրութեան վերջումն էլ հաւաքած են և դրած իրանց բացատրութեամբք, որը գիտէ և պ. Երիցեանցը:

Յայտնելով պ. Երիցեանցին իմ խորին շնորհակալութիւնն նորա մշակութեան և ջանասիրութեան համար, խնդրում եմ այս մի անգամն էլ ների, որ զանցանելով նորա հրամանից, նորա անունը յիշեցի. ինչ կայ նեղանալու, ինքն էլ չատ ինձ նման մի քաղքցի, երկուսս էլ չատ և չատ պէտք է ուսանենք, մինչև որ առանց մեղանչելու համեստութեան դէմ կարող լինենք այն տոնով (ոճով) խօսել, ինչպէսին նա գործ դրեց իւր դասախօսութեան ժամանակ: Իմ ասածս այս էր,—թէ չէ ինչ է ի զուր Ջայցովի, Լենորմանի և այլոց պոչից բռնել. ու. մորակի ծայրն էլ ի զուր աշխատել է և՛ խմբագրին հասցնել: Ես չեմ կասկածում, որ եթէ մենք՝ ես Քաղքցիս ու պ. Երիցեանցը համեստութեամբ և մեր չափը ճանաչելով, մեր լեհերի գեօրա ոտներս ձգելով աշխատենք հայոց պատմութեան մութը կէտերը պարզաբանել—պ. Սիմէօնեանցը միշտ ուրախութեամբ և շնորհակալութեամբ կ'տպէ «Մեղուի» մէջ յօդուածներն, ինչպէս յոյս ունիմ, որ գիջողութեամբ կ'հրատարակէ և այս ֆելիէտոնս:

Հապա ինչ աղ կունենայ ֆելիէտոնս, եթէ մէջը և մի վարդապետի գործ չյիշեմ, չէ որ ամեն կերակուր համեմ կուզի. որ համեղ լինի, մանաւանդ «Մեղուի» ֆելիէտոնը, «Մեղուի», որ կղերական, այս ինքն վարդապետական բարեկամ անունը ստացած է: Ուրեմն—ուրեմն այն, որ հանդէս թող գայ մի վարդապետ:

Լսում եմ, որ հայր Խորէն Ստեփանէն բաւական մեծ գումար է հաւաքել, իրան պատիւ և փառք, յայտնի բան է և՛ վարձք, բայց մի բան ինձ դուր չեկաւ, որ նա դուքնէ դուքան թափառում է և մի մանէթով ու տասը չայով և աւելի պակասով ժողովարարութիւն անում սուրբ աթոռի համար, որոյ համար չեմ կարծում որ այդ պատիւ լինի, քանի նա մայր աթոռ է, և ստիպողական կարիք չունի, ինչպէս «Արարատում» տպած հաշիւը ցոյց է տալիս: Այդ ձևով ժողովարարութիւն անում են աղքատ վանքերի միաբանք, վարդապետք և կուսանք իրանց վանահօր թոյլտուութեամբ, մի տուփ էլ չինքից կախած—և ոչ ընդհանրական հայրապետի նուիրակներն և մայր աթոռի վարդապետները:

Չնեղանան հայր սուրբերը—նոցա գործերից աւելի ցաւալի երևոյթներ են լինում: Ա՛ռ ընթերցող և կարդա «Մշակի» այս տարուան № 5ի «Ձեզ ենք դիմում» առաջնորդող յօդուածը: Ես գիտեմ, ընթերցող, ում է դիմում—դիմում է մանըր վաճառականներին, գործակատարներին, քահանաներին, ուսուցիչներին, գիւղացիներին, արհեստաւորներին և հայ կանանց և խնդրում, որ փող տան, պահպանեն «Մշակը»—դիմում է նրանց, որոնց գլխին լափ չէ թողել, որ ածած չլինի—և այսօր ազգի յոյսն ու յառաջադիմութիւնը նոցա մէջ է գտնում—իսկ համալսարականները—դոքա ցեց են և ուտիճ, երբ «հայը համալսարանական ուսում է ստանում նա կորած է ազգի մտաւոր և բարոյական կեանքի համար, համալսարանականը միմիայն մտածում է իր փորի վերայ (նոյնը վաղ ասվում էր հայ վաճառականի վերայ), համալսարանակը տգէտ է, անուս, ծոյլ, անգործ, անկիրթ, եսական, չահասէր, հարստահարող և թշնամի ժողովրդի ամեն տեսակ առաջադիմութեան». (որպիսիք երբեմն եկեղեցականք էին Մշակի խօսքով, աւելի վատթար հայ կանանք էին):

Իրաւ է այս խօսքերը իրանք ամենից ճարտար արտայայտիչք են պ. Գ. Ա...ի մտաւոր և բարոյական վիճակին, բայց և այնպէս ես էլ իմս ասեմ, որ սիրտս հովանայ, որովհետև անկարելի է այդպիսի ցնդաբանութիւնք և սխալ վարդապետութիւն, ժողովուրդ մոլորեցնող գաղափարներ կարդալ անվրդով հոգւով:

Ժողովրդի բարօրութիւնը գիտութեամբ է միայն և սորա գործադրութեամբ կեանքի մէջ, ում միջնորդութեամբ այս պիտի լինի հայ ազգի մէջ—անուս գործակատարի, տգէտ գիւղացու, արհեստաւորի, թէ համալսարանականների: Պ. Գ. Ա...ի խօսքերը կ'նշանակեն, տգիտութիւնն ապրի—իսկ գիտութիւնը մեռնի—կեցցէ խաւարը—կորչի գիտութիւնն, որ Մշակը ապրի—այսպիսի ուղղութիւն, այսպիսի գաղափարներ տարածելը: Ժողովրդեան մէջ աւելի է քան անմիտ կիրք, ժողովուրդն իր ուսեալ և կրթված դասի դէմ գրգռելը. սորա վարկը նորա աչքում կոտրել ջանալն աւելի է, քան չարամըտութիւն, ինչ զանազանութիւն կայ մի տգէտ եկեղեցականի և պ. Գ. Ա...ի մէջ—այնպիսի եկեղեցականի, որոյ կարծիքով հաւատն ու երջանկութիւնը տգիտութեան մէջ է: Չէ որ երէկ մէկ այսօր երկու է, որ նոյն պ. Գ. Ա. առաջարկում էր կովկասում համալսարան բանալ—մինչ ժողովուրդը հարստահարող, ծոյլ, տգէտ, պղերգ, անկիրթ, ժողովրդեան վնասակար անձինք պատրաստելու համար, այդպիսի ցանկութիւն ունեցողն ինքը ով է, մինչ այն անձին ծախքերը լինում են համալսարանների վերայ—լոկ ժողովրդը հարստահարող դաս պատրաստելու համար—յանցանք է այդպիսի միայն անգամ գլխով անցնելը. Մինչ կայր է պ. Գ. Ա. և չէ տեսնում լուսաւորեալ աշխարհի բարօրութիւնն, որ գիտութեան արդիւնք է, և ոչ տգիտութեան, իսկ գիտութեան գլխաւոր տաճարը համալսարանն է. Մինչ ինքն ևս նոյն տեղից չէ ստացել իւր կրթութիւնը կամ գոնէ իւր ուսումնական տիտղոսն այն համալսարանից է ստացած, որ ուղղութեամբ այլ դրամով է տալիս իր վկայականը, բայց և այնպէս—իւր բարոյական մեկրտութեան ապացոյց անգամ անպատուելը—ուրացութիւն չէ, թէ ինքն էլ մինն է այն ժողովուրդ հարստահարողներից երևի համալսարանական և կամենում է հարստահարել տգէտներին. չողոքորթելով նոցա անմարդութեան. Ազգի համար նախանձոր են գրում նոքա, որոնք իրանց կեանքի համար ոչ մի կանոն և նախադիծ չունին,—ցաւում են, որ հայը չատ ամուր է իւր կրօնական սովորութեանց մէջ—հապա դիւրաւ հաւատափոխ եղող պիտի լինի, ցաւում են, որ հայը ամուր է պահում իւր ընտանեկան սովորութիւնքը—հապա դիւրաւ [illegible] լինեն այր և կին, ու հեշտութեամբ յափշտակվին երևակայական գաղափարներով—այս ինչպիսի գաղափարներ են, որ մեր գրականութեան մէջ հանդէս են գալիս—ահա դառն և ցաւալի երևոյթներ, որ յիրաւի ճնշում է մարդուս միտքը ու հոգին: Վայն այն հասարակութեան, որոյ առաջնորդների ղեկավարն —բուռն կիրքն է, չաչանդութիւնն ու անսանձ եսականութիւնը:

Ես կարծում եմ և յոյս ունիմ, որ մեր յետին տգէտ գիւղացին էլ կ'հասկանայ իւր բնական առողջ մտքով այդպիսի գաղափարների անհեթեթութիւնն և միշտ կասէ, կեցցեն գիտութիւնն ու սորա տաճարները, կորչին սոցա թշնամիքը, որին և բազմանան համալսարանականք և լինին առաջնորդ հայ ժողովրդեան դէպի բարօրութիւն իրանց գիտութեամբ:

Թէև հոնեօք բազում են, բայց այս անգամ այս քանով բաւականանում եմ և ֆելիէտոնս վերջացնում, որ ընթերցողս չձանձրի:

Քաղքցի

տաքբքեր ընթերցողներին լիուլի բաւականութիւն տալ նորա երկրաբանական, ժողովրդագրական և տնտեսական դրութեան մասին, սակայն այդ հանգամանքը չէ կարող արդարացնել մեզ, եթէ որ գոնէ մեր տեսածը և լսածը չհաղորդենք „Մեղուիդ“ ընթերցողներին:- Այս վիճակի մէջ համարվում են մօտաւորապէս—7000 հայեր, որոնք թէև գրեթէ ամբողջապէս գաղթական են կարնոյ, սակայն տեղական բնութիւնը (գարունը սաստիկ անձրևային է և խոնաւ, իսկ ձմեռն խիստ և բքաբեր), աշխարհագրական յետ ընկած կեդրոններից հեռու դրութիւնը և մի քանի այլ հանգամանքներ ծալկացու թէ հոգւոյ և թէ մարմնոյ վերայ տպաւորել են մի քանի աչքի ընկնող պանազանութիւններ իւրեանց հարևան Ախալքալաքի վիճակի գաղթականներից: Տգիտութեան հրէշի ազդեցութիւնը դոցա վերայ աւելի ևս տարածուած է. ոչ մի գիւղում չկայ ուսումնարան, քահանաները գրեթէ առանց բացառութեան տըգէտ, կոպիտ և հարբեցող անձինք են և պարապած միմիայն իւրեանց որովայնը պարարտացնելով: Տեղական գործակալքն, որ ենթարկվում են Ախալքալաքի գործակալի իրաւասութեանը (ինչպէս հաւատացրին մեզ նոյն իսկ ժողովրդականքը), բոլորովին անհոգ են և միայն շահը մտածողք: Եկեղեցիները անշուք, կեղտոտ և անկարգ դրութեան մէջ են, որպէս և քահանաները: Մեր դաւանութեան հակառակ ամենատեսակ գործողութիւններ կատարվում են դոցա մէջ. Եկեղեցական արդիւնքները կերակուր են լինում երեցփոխանների և քահանաների անկուշտ որովայններին: Մի խօսքով եկեղեցական կողմից Ծալկան կատարեալ անիշխանութիւն է ներկայացնում: Հարցնում եմ գիւղականներին. մի՞թէ այդ խառնիճաղանճութիւնը անյայտ է իշխանութեան: «Ախպար չիտենք դուն երկնքէն դուգաս թէ երկրէն, հրեղէն ես, թէ հողեղէն—մեր գործակատարներուն ու էպիսկոպոսներուն շատ պէ՞տքն է օր մեր տէրտէրները մէկ մէկ դէլի են կարել ու մեր չտեսած չիմացած բաները կենէն մեր գլխուն. անոնցն ան է օր տարին մէ անգամ մը գան, պոլամայ խաչամբուրներն առնեն ու էրթան, ահա՛ ծալկացու պատասխանը:—

Պատահեցաւ ինձ լինել վիճակի Խաչ անուանեալ գիւղը որտեղից մի քննիչ, նշանակուած հոգևոր իշխանութիւնից սինոդի հրամանաւ, նոր գնացած էր: Այդ գիւղը հովվում է մի մերձակայ գիւղի ծխատէր քահանայ սեպհական քահանայից զուրկ լինելու պատճառով: Գիւղի հասարակութիւնը սորանից մի քանի տարի առաջ առաջարկել է իշխանութեան ձեռնադրել իւրեանց գիւղի վերայ մի Մանասեան անուն երիտասարդի, որին տեսայ անձամբ, և որին մէջ թէև շատ քիչ արժանաւորութիւն կայ այդ բարձր կոչման համար, սակայն գիւղացիների վկայութեամբ դա մի ծանրաբարոյ և ազնիւ բնաւորութեան տէր անհատ է, գրաւած հասարակութեան համակրութիւնը և անհամեմատ բարձր իւր հակառակորդից, որ մի ծանծաղամիտ անհատ է երևում, դեռ ևս անչափահաս քահանայական կոչման համար: Վերջինս անցեալ պատերազմի վերջերքին դիմում է գիւղի հասարակութեանը աղերսելով տալու իւրեան հարկից ազատման վկայական միլիցիոներութիւնից ազատ մնալու համար և զանազան գրաւիչ միջոցներով յաջողելով իւր ձեռնարկութեան սկզբում հեռանում է Ախալքալաք ուսանելու անունով, այն ինչ այդ տեղից սկսում է խաւարի մէջ ուռկան ձգել քահանայութեան աստիճանը ստանալու համար... Խաչ գիւղի հասարակութիւնը ուղարկում է Տփխիս իւր միջից մի քանի անձանց վերոյիշեալ Մանասեանց տիրացուի ձեռնադրութեան գործերից տեղեկութիւններ ստանալ վիճակային ատենում, բայց ո՞րքան է լինում սոցա զարմանքը երբ կոնսիստորեայից յայտնում են, թէ իւրեանց ընտրելոյն գործքերը արդէն առաջարկուած են սինոդին, բայց ո՞վ է ընտրեալը—Պլուտեանց տիրացուն է: Զայրացած գիւղացիք բողոքում են սինոդին, թէ խնդրագրով և թէ հեռագրով: Սոցա հիման վերայ սինոդը նշանակում է քննութիւն: Ախալքալաքի գործակատարը, քննութիւնը յանձնում է իւր ստորադրեալ քահանաներից մինին, եթէ չեմ սխալվում, Գանձայ գիւղի Արիստակէս քահանայ Դիւրկէրեանցին առանձին հրահանգով: Այնուամենայնիւ մի անգամ խաբուած գիւղացիք միւս անգամ որոշում են չըխաբուիլ. գիւղի 24 ծխից 16-ը ձայն է տալիս Մանասեանցի համար, մնացած 8-ը ի բաց առեալ 2ը՝ Պըլուտեանց տները ոչ մինի և ո՛չ միւսի սիրտն կոտրել չուզելով 24 ծխից բաղկացած գիւղի համար երկուսին միանգամայն ցանկանում են քահանայացնել: Ինչպէս տեսնում է ընթերցողը գիւղի ընտրութիւնը ամենայն իրաւամբ պատկանում է Մանասեանցին: Չար լեզուները հաւատացնում են՝ որ յաջողութիւնը սինոդում նորա հակառակորդի կողմն է անցնում: Լսում ենք, որ գիւղացիք վճռել են իւրեանց իրաւունքը չթողլատրել բռնաբարելու: Այսպիսի գործքեր մեր հոգևոր իշխանութեանց կողմից այնքան սովորական են և այնպիսի ընդարձակ սահմանների են հասած, որ գոնէ մենք լաւ ապագայ չենք գուշակում...:

Ծալկայի գիւղականները, մեծ ծարաւ են զգում ուսման և կրթութեան, բայց ո՞վ է նորանց բաւականութիւն տուողը. ո՛չ մինը Վրաստանի և Իմէրէթի թեմ. վերատեսուչներից չէ բարեհաճել ուշադրութիւն դարձնել մի այսպիսի յետ ընկած վիճակի վերայ, երևի պարապած լինելով խճուղիների և երկաթուղւոյ գծի վերայ գտնուող գիւղերով և քաղաքներով, որտեղ միշտ գտնվում են խօսողներ և բողոքողներ և որտեղերից կարելի է գովուիլ լրագրութեան մէջ...: Իսկ հոգևոր գըլուխների վերայ արժէ՞, ընթերցող, մտնացոյց անգամ լինել, որոնցից բացի տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր բառից ոչինչ չէ լսել մեր խեղճ ծալկացին:

Անդրէաս

* * *

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻ

Հայոց Աղքատաց Հոգաբարձութեան

1879-ի հաշիւը.

Մուտք.

1878 դեկտեմբերի 15-ից մինչև 1879 դեկտեմբերի 15-ը՝ տարեկան հաշւից գանձարանում աւելացել է . . . . 85 ռ.—56 կ.

74 անդամներից 3-ական ռուբլի ստանալով, այլև՝ գանձատփից, գանձանակից, զանազան անձերից նուէրներ, նոր-տարուայ ու զատկի արգիւնքից, աչքալուսից, պսակից և ճանապարհորդներից ստացուած գումարների հետ միասին ընդամենը եղած է. . . . 1009 ռ. 35 կ.

Ծախք.

Վերոյիշեալ գումարից Աղքատաց Հոգաբարձութիւնը օգնութիւն է հասցրել 14 աղքատ ընտանիքի, ամսական փող և ս. Ծննդեան ու զատկի տօների համար նոցա ընծաներ տալով, որոնց ընդհանուր գումարն է. . . . 687 ռ. -75 կ.

Ուրեմն, ներկայ 1880 թուականի համար Աղքատաց գանձարանում մնում է ընդամենը 321 ռ.—60 կոպ.

Աղքատաց ընկերութեան հոգաբարձու՝

Գ. Չէրքէզեանց

ԹԱՅՄԶԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Թայմզ լրագիր յունվար 2 և 3 թիւերով հրատարակուած երկու խմբագրական յօդուածներուն մէջ Պ. Քէօլլէրի գործին վրայ խօսելով, յոյս կը յայտնէ թէ Կ. Պոլսոյ Անգղիական դեսպանը Փոքր-Ասիոյ բարենորոգմանց վերաբերեալ խնդիրներու մէջ ալ նոյն հաստատամտութեամբ և կտրուկ ընթացիւք իւր դատն յառաջ պիտի տանի, և խորհուրդ կը տայ Սըր Հէնրի Լէյարտի, որ Թուրքաց հետ դիւանագիտութեամբ գործ տեսնելու շատ ջանք չընէ, այլ իւր մինչև ցարդ բռնած զօրաւոր ընթացքը բաւական համարի. վասն զի, կըսէ, Թուրքերը դիւանագիտութեան մէջ վարպետ եղած են, և չեմք կըրնար այդ միջոցաւ բան մը կատարել տալ անոնց: Թայմզ ամեն բարի առաջադրութեանց դէմ Կ. Պոլսոյ պաշտօնական մարմնոյն մէկ մասին սովորաբար ըրած յամառ ընդդիմութիւնը կը բացատրէ, որ Բլէվնայի մէջ Ղազի Օսման փաշային Ռուսներուն ըրած ընդդիմութենէն շատ վար չմնար եղեր, և զայս պատճառ կը համարի Թուրքիոյ վերջին ձախողութեանց: Յետոյ այսպէս կը շարունակէ.

“ Կ. Պոլիս, փոխանակ գաւառաց մէջ բարւոք կառավարութեան համար եղած ջանքերը քաջալերելու, գլխաւոր արգելքն է բարենորոգմանց, և կեդրոնական վարչութենէն օգնութիւն սպասող պաշտօնատարք յապաղումէ զատ ուրիշ բան չեն գիտեր: Երէկ, մեր Անթապու թղթակցին մէկ նոր նամակն հրատարակեցինք, որ փոքր-Ասիոյ վիճակին վրա կենդանի պատկեր մը կը պարունակէր, ինչպէս իւր նախորդ նամակներն, և մեր թղթակցին յիշած մէկ պարագայն՝ Կ. Պոլսէն եղած սոյն ընդդիմութեան աչքի զարնող մէկ օրինակն է: Քանի մ՚ ամիս առաջ Հալէպի մէջ կարևոր յանձնախումբ մը կազմուած էր նահանգին վիճակին վրայ բարւոքումներ առաջարկելու համար: Բազմաթիւ օգտակար առաջարկութիւնք եղան և խել մը պատուական տեղեկագրեր (մազպաթա) յղնուեցան: Բայց այն տեղեկագիրք Բ. Դուռը պէտք էր ղրկուէին՝ գործադրուելէ առաջ կեդրոնական կառավարութեան հաւանութեամբ ու վաւերացումն ստանալու համար: Մեր թղթակիցը շատ յօգնութիւն ստանձներ է հասկնալու համար թէ արդեօք Կ. Պոլսէն պատասխան եկա՞ծ էր այն տեղեկագրաց, և իւր ստուգածին նայելով, ամենափոքր ուշադրութիւն անգամ չէ ընծայուած անոնց. Հալէպի բարենորոգմանց յանձնախմբին ցրուելէն ի վեր այժմ վեց ամիս է, և խիստ հաւանական է որ, ինչպէս մեր թըղթակիցը կըսէ, այդ տեղեկագիրք Վ.եհ. Սուլթանին շուրջն այնքան արագ արագ կերպիւ իրարու յաջորդող բազմաթիւ նախարարութեանց միոյն ժամանակ պարապ թուղթերու կողովին մէջ նետուած լինին. բայց այս պարագայն Թուրքիոյ մէջ ամեն կողմ տեսնուած վիճակին մէկ պարզ օրինակն է միայն, և կառավարութեան սրտին մէջ անդամալուծութիւն կենալ կը թուի:

“ Աւելի դէշ պարագայ մը Քարբերդի և Տիարպէքիրի նահանգաց մէջ տեսնուած է: Վերջին նահանգին մէջ կտրուկ Քօմիսէր մը, այնէ Ապէտին փաշան իրեն յանձնուած բարենորոգումները գործադրելու համար զօրաւոր և իրական միջոցներ ձեռք առաւ: Բայց Բ. Դուռը շուտով հասկցուց Ապէտին փաշային թէ իւր ընթացքէն գոհ չէր:

“ Հետևութիւնն այն եղաւ որ Քարբերդի տեղական կառավարութիւնն ապարէզ կարդաց անոր յաջորդին (Մանաս էֆէնտիին) *): Քարբերդէն 8—10 ժամ հեռի ուրիշ գաւառի մը մէջ (Չարսանճագի գաւառին համար է,) տեսակ մը կալուածապետական գլուխ՝ Հայ քրիստոնեայներէ բաղկացեալ ժողովրդեան մը վրայ ազատաբար բռնապետութիւն ի գործ կը դնէ, և կը յաջողի բոլորովին անպատիժ մնալ: Այս մարդուն ազդեցութեան ներքև գործուած ոճրի մը վրայ քննութիւն բանալու համար պաշտօնատար մը ղրկուեցաւ տեղական կառավարութենէն, բայց ըստ որում այդ պաշտօնատարը նոյն ինքն յանցաւորին հիւր եղած է, լինելիք տեղեկագիրն այժմէն կը գուշակուի: Այդ չարագործ գլուխն աղքատ ժողովրդէն բռնութեամբ դրամ կառնու, որով Կ. Պոլսոյ պաշտօնատարները կը կաշառէ. և այսպէս ամբողջ տէրութեան դժբաղդութեանց և խեղճութեան պատասխանատուութիւնը մայրաքաղաքին կառավարող դասուն կը վերագրի:

“ Միանգամայն, ինչպէս մեր թըղթակցին պատմութեան մէկ ուրիշ մասէն կը հասկցուի, այնպիսի Թուրք պաշտօնատարք կան, որք բարւոք վարչութեան պէտքը լաւ զգացած են, և եթէ Սուլթանէն և անոր նախարարներէն պէտք եղած օգնութիւնը գտնեն, զայն ի գործ դնելու ազդուութիւնն ու կարողութիւնն ունին: Մեր թղթակիցը վերջերս նկարագրած էր Զէյթունի քաղաքին և շրջակայ գաւառին ողբալի վիճակը: Թուրք իշխանութեանց կողմէ ընդերկար անիրաւութիւնք ի գործ դըրվելուն պատճառաւ, յիշեալ քաղաքին բնակիչները շարունակ ապստամբական վիճակի մէջ գտնուած էին, և աւազակաց խումբ մը կազմուած էր որ շրջակայից ահ և երկիւղն էր: Սակայն Անգղիացի Սայիտ փաշան գաւառին (*) կառավարիչ անուանեցաւ, և ազդուութեամբ ձեռք զարկաւ Զէյթունի մէջ բարեկարգութիւն վերահաստատելու գործին: Դըժուար գործողութիւն մ՚ էր այս, որովհետև անօգուտ էր բանտարկեալ աւազակներն արձակել՝ երբ անոնց գլուխը (Պապիկի համար է) լերանց մէջ ապստամբ մ՚էր և զայն զինու զօրութեամբ նուաճել՝ մարդու մըտքէ չանցած կը թուի: Բայց դժուարին էր նա և այդ գլուխն համոզել, որովհետև այդ մարդը՝ մեծ իրաւամբ՝ երբեք վստահութիւն չէր դներ Թուրքական խոստումներու վրայ: Սակայն Անգղիացի սպայ մը, այն է տեղակալ Չէրմսայտ, աւազակապետին հետ քանի մ՚անգամ տեսակցեցաւ, և ի վերջոյ տեսակ մը հաշտութիւն հաստատեցաւ: Բանտարկեալ աւազակներն (**) արձակեցան, և որ և է հարցում չեղաւ կամ փոխարինութիւն չխնդրուեցաւ: Բայց Սայիտ փաշան իւր անմիջական նպատակին մէջ յաջողեցաւ, և իւր ազդուութիւնն ու ուղղութիւնն ամեն մարդոց վստահութիւն ներշնչած են իւր վարչութեան վրայ: Եւրոպական Թուրքիայէն եկած գաղթականներէն մի միայն մէկ չորրորդն ողջ են այժմ, և այս սոսկալի իրողութիւնը զանոնք իրենց յատուկ գիւղերու և տուներու մէջ հաստատելու մասին Թուրք իշխանութեանց ցուցած անհոգութեան կը վերագրէ: Միով բանիւ մեր թղթակիցն զՍայիտ փաշան պարկեշտ, և ներկայ զեղծմանց բարձման իրապէս փափաքող անձ մը կը նկարէ, բայց կը մնայ տեսնել թէ մինչև ո՛ր աստիճան օգնութիւն պիտի գտնէ կեդրոնական կառավարութենէն: Ո՛ր կողմ ալ դառնամք, նոյն դժուարութեան կը հանդիպիմք:

“ Մեր թղթակիցն իւր նամակը փակած կ՚իմանար թէ Պէյքըր փաշան Խաքէնտէրուն հասած էր Փոքր-Ասիոյ մէջ բարենորոգմանց հսկելու պաշտօնով, և յոյս կը յայտնէ թէ Անգղիական կառավարութիւնը վերջապէս իրական բան մ՚ընելու վրայ է Ասիական Թուրքիոյ բարւոյն համար: Սակայն Պէյքըր փաշան Անգղիական կառավարութեան պաշտօնատարը չէ, և իւր տեղեկագրերն ալ Հալէպի յանձնախմբին տեղեկագրաց պէս Կ. Պօլիս պէտք է ղրկուին: Բայց մեր դեսպանին պարտքը պիտի լինի հսկել որ անհոգութիւն չցուցուի Պէյքըր փաշայի տեղեկագրաց նկատմամբ, և կը յուսամք թէ Տօքթօր Քէօլլերի գործին մէջ Սըր Հէնրի Լէյարտի ցուցուցած ազդուութիւնն ապահովութիւն մ'է որ նա ապագային մէջ ալ նոյնպէս ազդու ընթացք մը պիտի բռնէ:»

---

*) Քարբերդի «ողբերգական կատակերգութեան» վրայ վերջերս մեր հրատարակած տեղեկութիւնք, որոց թուականը Թայմզի տեղեկութեանց թուականէն աւելի նոր էին, անշուշտ չեն մոռցուած տակաւին: Ծ. Խմբ.

(Մասիս 9 յուն.)

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

Ժամ ութին Ազգ. Ժողովոյ մայր Դիւանն, Երեսփոխաններէ ոմանք, վարչութեան ճիւղերն և վաճառականներէն ոմանք Ն. Սրբազնութեան ներկայացան:

Տ. Եուսուֆեան էֆէնտի ի դիմաց Ազգ. Ժողովոյ գեղեցիկ բանախօսութիւն մ'ըրաւ, որուն ի պատասխանի Ն. Սրբազնութիւնն ազգին առ ինքն ցոյց տուած ջերմ համակրութենէն և վստահութենէն շնորհակալութիւն յայտնելով, ըսաւ թէ ինք լիայոյս է ազգին ապագայի նկատմամբ, և նոր վստահութիւններ ստացած է. ազգն իւր նպատակին պիտի հասնի, և այդ նպատակին իրացումն ազգին և տէրութեան փրկութիւնը պիտի լինի, զի մեր պահանջածն այնպիսի բան մ'է, որ տէրութեան շահուցը չհակառակելէ զատ միանգամայն յոյժ նպաստաւոր է: Մեք երկրին ընդհանուր բարեկարգութեանն ու բարգաւաճմանը փափաքող եմք, մեր գանգատներն յոռի վարչութեան դէմ են. յորմէ Թուրք և Հայ ժողովուրդը միանգամայն կը վնասի, և այս երկու ժողովուրդն ի միասին կը հասցնէ մեզ իւր գանգատները:

Եւ քանիցս անկեղծօրէն յայտնած եմ թէ՛ տէրութեան նախարարաց և թէ՛ Պէրլինի վեհաժողովին թէ խառն ազգութիւններէ բաղկացեալ երկրի մ'անդորրութեան համերաշխութիւնը տեղական ինքնօրէնութեան մէջ է:

Ահա այս է մեր պահանջածն, և ոչ թէ Օսմ. տէրութենէն անջատում:

Յուսամք վստահութեամբ, քալեմք յառաջ դէպի մեր նպատակն, և կը յուսամ թէ շնորհիւ Վեհ. Սուլթանին մեր արդար իղձերը կը պսակուին:

Ապա, յարեց Ն. Սրբազնութիւնն, Ազգին օգնութիւնն ու ուշադրութիւնը կը հրաւիրեմ վարժարանաց զարգացման, ընկերութեանց յառաջդիմութեան և սովելոց վրայ:

(Մասիս 8 յուն).

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Վաղը հինգշաբթի, ամսոյս 31ին ամառային թատրոնում հայ դերասանական մշտական խումբը կներկայացնէ յօգուտ պ. Ալալեանի առաջին անգամ «Մայրասպան» դրամա 5 գործողութեամբ և 7 պատկերով, թարգմ. պ. Ալալեանցի:

* * *

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են.

Տէրութեան կարգադրութեամբ Գանձակի նահանգապետ իշխան Ճաւճավաձէն տեղափոխվում է Դաղստան: Գանձակը նորա ջերմեռանդ և օգտակար գործունէութեան համար հարկաւոր համարեց պատուել նորին վսեմութիւնը մի փառաւոր խնճոյքով, որը, ինչպէս ասում են, նստեց 1500 ռուբլի: Խնճոյքին մասնակից էին տէրութեան բոլոր ծառայողները:

* * *

Նոյն տեղից հաղորդում են. քաղաքիս մէջ սարսափելի կերպով տարածուած է բողազացաւ հիւանդութիւնը, որին զոհ են գնում շատ երեխայք, սկսած մի ամսականից սկսած մինչև 15 տարեկան հասակը: Մեր յարգելի բժիշկները փոխանակ հաւաքուելու և այս հիւանդութեան առաջն առնելու միջոցների մասին մտածելու, իւրեանց անձնական կրքերին և շահերին զոհում են ողորմելի հասարակութիւնը: Օրինակ: Մի պարոնի երեխան մերձ ի մահ լինելով բողազացաւ հիւանդութիւնից, հայրը ուղարկում է ծառայ և կառք մի բժշկի մօտ, իսկ բժիշկը յետ է դարձնում հետևեալ պատասխանով. «ես ձեր տանու բժիշկը չեմ, կանչեցէք X-ին»:—

* * *

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են հետևեալները. —Տեղւոյս ուսումնարանները շատ ցաւալի դրութեան մէջ են. հասարակութիւնը շատ սառնարիւն նայում է այդ հանգամանքին: Բայց թէ ինչի համար է հասարակութիւնը իւր փողերը խնայում այսպիսի բարի գործի համար, դա մի դժուարալուծ հանելուկ է:

* * *

— Անցեալ տարի հանգուցեալ Տէր-Ներսէսեանի հարսանիքին, ինչպէս տեղեկացանք հաստատ աղբիւրներից, մօտ 300 ռուբլի փող հաւաքուեցաւ յօգուտ Արարատեան ընկերութեան: Բայց թէ ինչ եղան այդ փողերը, ում մօտ են, կամ ինչու մինչև ցայսօր հասարակութիւնը տեղեկութիւն չունի դորա մասին, մեզ անյայտ է:

* * *

— Պարոն Ներսէս Շահլամեանը, որ յայտնի է իւր ջերմեռանդ գործունէութեամբ քաղաքիս երկսեռ դպրոցների մէջ որպէս երգեցողութեան ուսուցիչ, կազմել է մի խումբ երգեցիկ օրիորդների, որոնք քաղցր և ներդաշնակ երգեցողութեամբ երբեմն երբեմն երգում են եկեղեցիներում:

* * *

— Հոգևոր դպրոցի ուսուցիչները մտադիր են մի ներկայացում տալ յօգուտ տեղւոյս երկսեռ դպրոցների:

* * *

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ պ. Արծուեցիրը գրում է. գաւառապետ պ. Նիֆոնտովը, ի նկատի ունենալով կենսական պիտոյքների թանկութիւնն, Աղէքսանդրապօլու և նորա շրջակայ գիւղերի աղքատիկ ժողովրդի խեղճ և անտանելի դրութիւնը, ներկայ ամսուս 12ին կազմեց մի ժողով, քաղաքական կլուբում, տեղիս բարձր և միջին դասակարգի վաճառականներից, այն նպատակաւ, որ չքաւոր աղքատների դրութիւնը մի կերպիւ ապահովացնէ. պ. գաւառապետը բացատրեց նորանց այդ ժողովքի նպատակը, և խնդրեց նորանց, որքան կարող են օգնեն այդ մարդասէր նպատակը առաջացնելու: Այստեղի ժողովուրդը, որ մինչև ցայսօր չէ խնայել իւր լուման այդպիսի մի բարեգործութեան համար, այսօր էլ չխնայեցին, և իւրաքանչիւր անձ ըստ կարեաց նուիրեց մի գումար, որոնցից հանգանակութիւն եղաւ տասն ու չորս հազար (14000) ռ. այս գումարն թէև շատ չէ ժամանակի պահանջին և աղքատների մեծ թւին նայելով, այնու ամենայնիւ մասամբ կը հեշտացնի նորանց ներկայիս անտանելի դրութիւնը: Մեծայոյս ենք պ. Նիֆոնտովը ըստ արժանոյն կանէ տնօրինութիւն, և կազատէ այդ հարիւրաւոր գերդաստաններին սպառնացող վտանգներից, որոնք օրական հացի կարօտ յուսահատուած, դիմում են զանազան միջոցներով անձնասպանութեան. այդ ցաւալի դէպքը այս երկրորդ անգամն է, որ կըրկնվում է այստեղ, բայց որոնք ազատվում են դրացիների օգնութեամբ: ցանկանում ենք ի սրտէ կատարեալ յաջողութիւն այդ բարեգործ և մարդասէր ձեռնարկութեան:

* * *

Նոյնը գրում է՝ Նորակառոյց (Փրկիչ եկեղեցւոյ) գեղեցիկ խաչկալը այսօր զարդարում է իւր չքեղութեամբ այդ գեղեցկաշէն տաճարն, և գրաւում ամեն մի մուտք գործող անձի ուշադրութիւնը. տեղիս ջերմեռանդ ժողովուրդը մեծ քանակութեամբ դիմում է դէպի այդ նորաշէն եկեղեցին, որովհետև նորանց քսան տարուայ աշխատութեան պտուղը այսօր է յաջողվում նորանց վայելել: Յարգ և պատիւ Աղէքսանդրապօլու ժողովուրդին, որ նոքա չխնայեցին իւրեանց քրտնաջան աշխատութեամբ վաստակած փողն, և անձնական աշխատութիւնն այդպիսի մի ազգային փառաւոր յիշատակ կանգնեցնելու համար: Յոյս ունինք որ գերապատիւ Սուրենեանց հայր սուրբը ուշք կդարձնի նորա մաքրութեան վերայ ունեցած լուսաճաճանչ փայլը չծածկուի կեղտի վարագուրի տակ:

* * *

— Այստեղի ակցիզի ծառայողները, շատ խիստ կերպով են վարվում ժողովուրդի հետ, ամեն մի րոպէ կրպակէ կրպակ այցելում են, ամեն քունջ ու պուճախ նայում, վայ այն մարդուն որ ջեբումը ունեցած տասը պապիրոզից կամ մի սամուշկայ թութունից կէսը ծխած ու միւս մասը որ և է տեղ դրած լինի:

* * *

Նոյն տեղից գրում են. լսում ենք, որ թատրոնասէրները այս ամսու 26 ին տալու են երկրորդ ներկայացումն մի և նոյն նպատակի համար:

* * *

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ վաճառականները յուսահատութեան մէջ են, առևտուր չկայ: Ձիւնը կէս արշին բարձրութեամբ ծածկել է Աղէքսանդրապօլու գաւառը, որը լաւ նշան է գարնան բերքերի առատութեան համար. ցրտի սաստկութիւնը հասնում է 20 և 25 աստիճանի, այսպիսի սարսափելի ցուրտ Աղէքսանդրապօլը շատ ժամանակ է որ չէ տեսած:

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

1880 Թ. յունվարի 15-ից կհրատարակուի Երևանում շաբաթ մէկ անգամ

„ՊՍԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

Տարեկան գինն է . . . . . 4 ռուբլի:
Կէս տարուան . . . . . 3 ռուբլի:

Ցանկացողները կարող են ստորագրուել ուղղակի խմբագրատանը, Գէորգեան և ընկեր. տպարանումը, կամ Աբգար Գուլամիրեանցի խանութումն: Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտք է դիմել ուղղակի խմբագրին հետևեալ հասցէով՝ въ г. Эривань. Редактору газеты «ПСАКЪ» Васаку Пападжанову.

Խմբագիր—Հրատարակիչ՝ Դր. Վ. Պապաջանեանց:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

կենտրոնական գրավաճառանոցում, իշխան Մ. Բէհբութեանի հետևեալ թատրոնական հրատարակութիւնները:

Ա,	Վ[illegible] իմ վէչէր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	40 կ.
Բ,	Բէբիր Բիձու հանաք, օպերետայ մի գործողութեամբ .	25 կ.
Գ,	Աշնանային երեկոյ գիւղումը, վոդեվիլ մէկ արարուածով	25 կ.
Դ,	Բանի ամուսնութիւն, կոմեդիայ մէկ արարուածով .	40 կ.
Ե,	Ժանօ և Ժանէտ, օպերա-վոդեվիլ մէկ արարուածով .	40 կ.
Զ,	Պառաւներուն խրատ, մէկ արարուածով Մ. Տ. Գ. .	50 կ.
Է,	Տիկինը նրան սպասումէ, կատակերգութիւն մէկ արարուածով	30 կ.
Ը,	Անանուն կատակ, կատակերգութիւն մէկ արարուածով	40 կ.
Թ,	Պէպօ, կոմեդիայ երեք արարուածով Գ. Ս. . . .	30 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր հայերէն, ռուսերէն և օտար լեզուներէ, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, հայերէն, ռուսերէն և գաղիերէն վիպասանութիւններ, ամեն հասակի համար ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր: Պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ, օտարաքաղաքացիք իրանց պատուէրները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով. « въ Тифлисъ, въ Центральную книжную торговлю».

2—10

ВЫШЛА ИЗЪ ПЕЧАТИ БРОШЮРА: „ЭКОНОМИЧЕСКІЕ ОЧЕРКИ ЭРИВАНСКОЙ ГУБЕРНІИ и ОЗЕРО ГОКЧА“. Продается во всѣхъ книж. магазинахъ Тифлиса по одному рублю за экземпляръ. Иногородные адресуютъ свои требованія: Тифлисъ, въ «Кавказскую книжную торговлю», Захарію Петровичу Грикурову.

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ և ԳԵՕԿՉԱ ԼԻՃ“ անունով ռուսերէն գրքոյկը: Վաճառվում է Տփխիսի բոլոր գրավաճառների մօտ. գինն է մի ռուբլի. հասը՝ արդիւնքը յօգուտ „Արարատեան ընկերութեան“: Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով Въ Тифлисъ, въ „Кавказскую книж. торговлю“, Захарію Петровичу Грикурову. 3—5

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ ԼՐԱԳՐԻՆ

Բաժանորդ գրուել ցանկացողները թող բարեհաճին դառնալու առ պ. Պարոյր Կ. Պօլսում Ղալաթա, մաքսատան դիմացը Կէօչէ Օղլու խանը թիւ 12—13:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 29-го ЯНВАРЯ 1880 г. Типографія Амб. Энфиаджянцъ и К-о

Տպ. Բժշկեանց Մ. Ռոտինեանց